



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Գյուլտերի հայտեր

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 9 (74)

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2006 թվականի սեպտեմբերի 1-ից

Երեւան 2006

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՐԿ ST.9 ստանդարտի

- 21 Հայտի համարը
- 22 Հայտի ներկայացման թվականը
- 31 Առաջնային հայտի համարը
- 32 Առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33 Երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 42 Հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
- 51 Միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54 Գյուտի անվանումը
- 57 Գյուտի ռեֆերատը
- 62 Ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71 Հայտատուն, երկրի կոդը
- 72 Գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 74 Արտոնագրային հավատարմատարը
- 85 Միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86 Միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- 87 Միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 2000թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 2000 г.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 ընդհանուր բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

0010, Երևан, Главнй проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-267 общй отдел
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

E-mail: armpat@cornet.am

Տեղեկություններ համընդհանուր ծանոթացման դրված գյուտերի հայտերի մասին

(51) 2006

A01C 7/00

(21) P20060111 (22) 14.07.2006

(71) Վահան Լեւոնի Բաղայան, Կոտայքի մարզ, Աբովյան, Սարալանջի 4, բն. 38 (AM)

(72) Սիմոն Վլադիմիրի Ռաֆայելյան (AM), Վահան Լեւոնի Բաղայան (AM)

(54) **Ակոսակոճային սերմնահան ապարատ**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ սերմնահան ապարատներին:

Ապարատն ունի սերմնատուփ, դրա մեջ լիսեռի վրա պտտման եւ առանցքային ուղղությամբ տեղաշարժվելու հնարավորությամբ տեղակայված գլանաձեւ եռաստիճան ակոսակոճ, դրան պարփակող անգործարար կոճ, որն ունի ակոսակոճի նկատմամբ տեղաշարժվելու եւ դրա վրա սեւեռման հնարավորություն: Սերմնատուփի վրա տեղակայված են կոճի տեղաշարժի հետեւանքով առաջացած բացակները փակող ըստ բարձրության կարգավորվող թիթեղներ:

Ապահովվում է սերմերի հավասարաչափ դուրս բերում, նվազեցվում է սերմերի մեխանիկական վնասվածքը, 3 նկ.:

(51) 2006

A23L 1/212

(21) P20060084 (22) 22.05.2006

(71) Գեղամ Սևապյան, Երեւան, Էրեբունու 11, բն.37 (AM), Տատյանա Մկրտչյան, Երեւան, Էրեբունու 11, բն.37 (AM), Նելլի Սարկիսյան, Երեւան, Անդրանիկի 74, բն. 30 (AM), Գայանե Նիկողոսյան, Երեւան, Իսահակյան 1/1, բն.24 (AM)

(72) Գեղամ Սևապյան (AM), Տատյանա Մկրտչյան (AM), Նելլի Սարկիսյան (AM), Գայանե Նիկողոսյան (AM)

(54) **Պտղահատապտղային աղանդեր պատրաստելու եղանակ**

(57) Պատրաստում են պտղահատապտղային խյուս, եփաթանձրացնում այն մինչեւ 83-87% մնացորդային խոնավություն, ավելացնում շաքարավազ խյուսի զանգվածի 4,8-15,25% հաշվարկով ու ցորենի ալյուր խյուսի զանգվածի 1% հաշվարկով: Ստացված շփոթն եփանանձրացում են մինչեւ 72-74% մնացորդային խոնավություն, լցնում անոթի մեջ 10 մմ շերտով եւ ջրազրկում մինչեւ 22% մնացորդային խոնավություն: Շերտը վրադրում են պատրաստված լցոնի 10 մմ շերտով, լցոնը պատում համանման ջրազրկված շերտով եւ ստացված մթերքը ջրազրկում մինչեւ 22% մնացորդային խոնավություն: Լցոնը պատրաստում են շփոթից եւ ընկույզի միջուկներից եւ/կամ շաքարաչրից, եւ/կամ չրից 1:1 հարաբերակցությամբ եւ համեմունքից՝ դարչին՝ լցոնի զանգվածի հաշվարկով 0,8%, հիլ՝ 0,4% եւ մեխակ՝ 0,4: Միացված շերտերը ջրազրկում են մինչեւ 22% մնացորդային խոնավություն, ստացված մթերքն ենթարկում են ջերմային մշակման 5 րոպեի ընթացքում 100°C եւ փաթեթավորում:

Բարձրացվում է մթերքի սննդային արժեքը:

(51) 2006

A63F 3/02

(21) P20060097 (22) 19.06.2006

(71) Ռազմիկ Վաղարշակի Այվազյան, Երեւան, Արաբկիրի 39-րդ փող. 2, բն. 40 (AM)

(72) Ռազմիկ Վաղարշակի Այվազյան (AM)

(54) **Սեղանի խաղ**

(57) Խաղն ունի 100 վանդականոց շախմատային տախտակ, երկու խումբ շախմատային ֆիգուրներ, որոնցից յուրաքանչյուրն ունի 10 զինվոր, 8 ավանդական շախմատային ֆիգուր եւ 2 լրացուցիչ տարատեսակ ֆիգուր: Լրացուցիչ ֆիգուրները «վագր» եւ «կարդինալ» են: Շախմատային տախտակի B4, B7 եւ F4, F7 վանդակների վրա ամրակցված են օղակաձեւ, իսկ D4,

D7 եւ V4, V7 վանդակների վրա՝ խաչածեւ թիթեղներ:

Ընդլայնվում են խաղի հնարավորությունները, 8 նկ., 1 աղյուսակ:

(51) 2006

E05B 25/00

(21) P20060092 (22) 09.06.2006

(71) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան, Երեւան, Շիրազի 20, բն. 30 (AM), Էմիլ Գուրգենի Գրիգորյան, Երեւան, Տերյան 83, բն. 12 (AM)

(72) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM)

(54) **Փականք**

(57) Փականքն ունի իրանի մեջ պտտվելու հնարավորությամբ տեղակայված միջուկ, վերին փակիչ զսպանակած բույթեր եւ ճակատային մասում արված գնդածեւ հանվածքով ստորին փակիչ բույթեր իրենց գնդիկներով, ընդ որում բույթերը տեղակայված են իրանի եւ միջուկի իրար համառանցք շառավղային անցքերի մեջ: Փականքն ունի նաեւ գնդիկների հետ համագործակցող հանվածքներով բանալի: Վերին փակիչ զսպանակած բույթերի առնվազը կեսը անմիջապես փոխազդում է ստորին փակիչ բույթեր հանդիսացող եւ տարբեր տրամագծեր ունեցող գնդիկների հետ:

Պարզեցվում է փականքի կառուցվածքը, 2 նկ.: